Հարձակվում էին պտուղ չբերող ծառի վրա։ Մեկը կացնով սպառնում՝ մյուսն արգելում էր, խոստանալով, որ ծառը հաջորդ տարի պտուղ կտա։ Այս խոստումը, իհարկե, տրվում էր ծառի կողմից, իբր թե ծառն ինքն է խոսում, և նպատակ ուներ իրոք նրա պտղաբերությունն արծարծելու։ Ջատիկը մոտենում էր... նաև պտուղ չբերող ծառի պտղաբերությունը պիտի հարություն առներ, վերականգնվեր։

Այդ օրը ոչխարներին և գառներին դաղում էին՝ նշան էին դնում։

գ. Ավագ հինգշաբթի։ Նրանք, ովքեր մտադիր էին սրբություն առնելու, այդ օրը միաժում էին լինում։ Աղջիկները գնում էին աղբյուրների մոտ, նոր ծլած կանաչ տէխծը հավաքում, փունջերը եկեղեցու սեղանի առջև պահում, պրտրբաֆով ընբմ, բերում էին տուն և հացով ուտում. անշուշտ նրա համար, որ այդ նոր բուսած կանաչու զորությունն իրենց անցնի։

Երեկոյան վօնդրլվա՝ ոտնլվա էր։ Քահանաները բաժանում էին ժամվորներին աջ ձեռքները լվանալուց հետո օրհնված յուղը։ Սովորաբար ոչ ոք չէր սպասում իր հերթին, այլ վրա էին թափվում, իրարից խլում յուղը, քսում աչքերին, ճակատին, տանում տուն և ձգում կարասի կամ խնօցու մեջ, որ կարագն առատ լինի, կամ քսում էին կովի ծծերին, որ առատ կաթ տա։

Գիշերը՝ սգի գիշեր էր։ Եկեղեցում, երբ մոմերը հանգցնում էին, կարդում էին Մայրամ Աստվածածնի գրդակը՝ կտակը, ողբը իր որդու մահվան վրա և Հովհաննես Մկրտչի մխիթարական խոսքերը։ Շատերը նոր մեռածների գերեզմանների վրա մոմ էին վառում։

դ. Ուրբաթ օր։ Ի նշան սգո այդ օրը երեսները չէին լվանում և եկեղեցում ծունկ չէին դնում։ Օրփրթարու էին շինում։ Այսպես՝ դամրշին՝ դարբինը պողպատից շինում էր փոքր չախմախ, որը երեխայի աջ ուսի վրա էին կարում։ Գույնզգույն թելեր, կամ կտորներ էին տանում եկեղեցի, օրհնել տալիս, բերում տուն և երեխաների մեջքին, շուխայի կամ արխալուղի վրա, թելերով ճյուղանման նախշակարում, իսկ կտորներով՝ խաչ կարում, ասեղը գոնե յոթ անգամ անցկացնելով շորի միջով։ Թե՛ չախմախը, թե՛ այդ նախշերը և թե՛ խաչը պիտի երեխային պաշտպանեին կայծակից։ Դարբիններին պողպատե մատանիներ էին պատվիրում աղջիկների համար, որ հիշերը՝ գիշերը չկոխվեն, այսինքն՝ գիշերն արյան կանգնելուց չքրտնեն, լեզուները չկտրվի, շունչը չարգելվի՝ չնեղանան։ Հարթացուն՝ նշանած աղջիկը գույն-գույն թելերով նախշում էր ձուն և ուղարկում պատրոնանց տուն, որ պատան՝ պատից կախ տան՝ տունը չար աչքից պաշտպանելու համար։

ե. Շաբաթ օր։ Շատերը միաժում էին մնում։ Թաթախման ընթրիքին անպատճառ պիտի լիներ ներկած ձու և ձուկ, իսկ վերջը պիտի ուտեին թանավ՝ թանով սպաս, որն այդ օրվա համար ավելի թանձր էր պատրաստվում և հատկապես կոչվում էր տղոպան։

Զատիկ։ Դա բնության արթնացման, հարության օրն էր։ Սովորաբար հասարակական մատաղ էին անում, որը Գորիսում և այլ գյուղերում անհրաժեշտականի էր վերածվել։ Այդ օրվա մատաղը ախար էր կոչվում։ Մատաղի արյան մեջ թաթախում էին բոշնու մի հաստ ճյուղ, վրան հյուսած բարակ ճյուղերով և տանում տնկում արտում կամ այգում՝ չար աչքից պաշտպանելու համար։ Հնում մատաղի արյունը քսում էին եկեղեցու պատին[46], բայց այդ սո-

[46] Լալայեան Ե., Սիսիան, էջ 156։